



կանութիւնը դէպի կեանք և դէպի իր խնդիրները:

Սա ըստ էութեան սփիւռքահայ գրականութեան, սփիւռքահայութեան հետագայ հոգևոր և քաղաքական կեանքի նախապատրաստումն էր. ինչպիսի՞ դիրք բռնել անցեալի նկատմամբ, ինչպիսի՞ ծրագիր մշակել ներկայի և ապագայի համար:

«Մթին պատանուքիւն»-ը գրուած է երեսնական թուականների վերջին: Սա արդէն հասուն արձակագրի դործ է: Մանկութիւնից դէպի պատանութիւն, առաջին հասունացման տարիների մասին արձակագիրները՝ Ռուսայից, Լև Տոլստոյից, Գորկուց մինչև Զօրեան, Զարեան ու Մահարի, գրել են այն ժամանակ, երբ արդէն հասուն գրողներ էին: Շուշանեանը փաստօրէն Ֆրանսահայ գրականութեան երեսնական թուականների մթնոլորտի միջից է նայում տասնամասնհինգ տարիների հնութեան դէպքերին և հետագայ խմբագրումը աւելի է յտակեցրել այն տրամագրութիւնները, որոնցմով Շուշանեանի սերունդը վերագտնում էր կեանք: Եւ այս վէպն աւելի շատ պատմում է ոչ թէ այն մասին, թէ ինչպիսի տրամագրութեամբ և ինչպիսի նպատակներով նրանք վերակեսցին խաղաղ կեանքը, այլ աւելի շատ, թէ ինչպէս պիտի վերակսէին:

Վ. Շուշանեանը 1930—32 թուականներին գրած «Ալեկոծ տարիներ» մեծածաւալ հրատարակարկայական գրքում գրում է. «Պաւարէն դուրս ճողոպրողը նախ կ'երգէ լոյսին քաղցր ջերմութիւնը»: Երկու էջ յետոյ այս միտքը շարունակում է որոշակի օրինակներով և հետաքրքիր եղբակացութեամբ. «Պատմութիւնը Բարբիւսի ԿՐԱԿը չէ որ խընամքով պիտի պահէ, այլ Դիւհամէլի ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆը: Ու կոպիտ փաստը այն է, որ պատերազմի գրականութիւնը ցարդ որևէ հսկայ չէ տուած»:

Շուշանեանի այս պնդումը հետաքրքիր է ոչ այնքան պատերազմի գրականութեան մեծերի ժխտումով, որքան պատերազմը, ջարդը, սարսափն էր ժխտում որպէս գրականութեան նիւթ: Այս սերունդը կարծես շտապում էր իր կենսահաստատ ձգտումներով ու լիարժէք կեանքի ծարաւով ետ բերել կորցրածը: Արհաւիրքների իւրաքանչիւր յիշատակութիւնը, գութի և խղճահարութեան որևէ ցոյցը ծայրայեղ վերաւորական էր նրանց համար, ստիպում էր յիշել այն,

ինչը աշխատում էին նրանք մոռանալ. «Այդ անտեղի, կաշուն, այդ արհամարհանքով խառն գթութիւնն էր անտարակոյս, որ արիւնս կը պղտորէր...» — ասում է Բարկէնը:

Շուշանեանն, անպայման, գրում էր երեսնական թուականների տրամագրութիւններով մղուած, երբ արդէն լալկան ու ցաւքաշ հայրենասիրութեան մի ամբողջ ալիք էր սկսուել, որը շարունակում է մինչև այսօր: Արցունքի անսպառ մսխումի դէմ ըմբոստանում էր այն սերունդը, որն իր ուսերի վրայ էր կրել եղեռնի բոլոր դառնութիւնները, ուստի և ձգտում էր «լոյսին քաղցր ջերմութեանը»: Բարկէնի միտքը շարունակում և աւելի յտակեցնում է վէպի միւս հերոսը՝ պատանի Արշամը. «Մահմուդեցիցի գիւտ մը ըրած են վերջերս, — Մ եր խլեա կ ն եր ը, կ'ըսեն ակնարկելով որբերուն ու այրիներուն: Գութ ալ կայ, արհամարհանք ալ կայ այս բառին մէջ»:

Այս ընկզմի մէջ, անշուշտ, լսում է որբի վերաւորում ինքնասիրութիւնը, սակայն իր ժողովրդի ապագայով մտահոգուած գրող և հասարակական գործիչ Շուշանեանին ամենից առաջ տաղնապ էր պատճառում սեփական ցաւերի ու վշտերի վրայ չափից դուրս յապաղելը՝ ի դին սահող-անցնող կեանքի, ի դին ապագայի ալիքների: Սփիւռքահայ գրականութեան մէջ հենց ստեղծման օրերից նկատուել է՝ ջարդուած ազգի կոմպլեքսներից ազատագրուելու, առողջ բնազդով ապրելու ձգտում: Յամենայն դէպս, այդ ձգտումը նկատուել է նրանցից լաւագոյնները՝ երկերում: Իսկ ցաւամոլութեան դէմ բացէլբաց կամ սքողուած խօսելով է միշտ, մինչև իսկ մեր օրերը, բաւական է յիշել Վահէ Օշականի հետեւեալ՝ ձաղկող, բայց ճշմարիտ տողը. «Զեր վիշտերէն հաճոյք առնող հիւանդներ»: Սակայն աւելի դաժան, բայց դարձեալ ճշմարիտ տողեր ունէր Շահնուրը իր հրատարակարկայական յօդուածներում: Նման դէպքերում խօսում է ոչ թէ գրողի դաժանութիւնը, այլ ցաւը տեսնող գրողի տաղնապը, անհանդուրժողականութիւնը, մտահոգութիւնը իր ժողովրդի ճակատագրի հանդէպ: Այդպիսի մտահոգութիւնները քիչ են Շուշանեանի «Մթին պատանութիւն»-ում և աւելի շատ ու աւելի խիստ հրատարակարկայական յօդուածներում և օրագրերում: Այդ սերունդը իրաւունք չունէր անկեղծ

չլինելու սեփական ժողովրդի հանդէպ, դըժոխքը, որի միջով անցել էին նրանք, ստիպում էր ժողովրդի միտքն ու ոգին բարոյալքող ամենաչնչին երևոյթի դէմ ընդվզել ժամանակին և նոյնիսկ դառն խօսքեր ասելով: Նրանք լաւ գիտէին, թէ ինչպիսի թանկ գնով է ժողովուրդը վճարում իր մտաւորականների ամէն մի սխալի համար:

Շուշանեանը պատանեկան թեմայով գրուած մէկ այլ հրաշալի վէպ ունի՝ «Սիրոյ և արկածի տղաքը», որ դարձեալ նուիրուած է վերադարձին: Սակայն ի տարբերութիւն «Մթին պատանութիւն» վէպի հերոսների, այստեղ անհոգ և արկածների ծարաւ պատանիներ են: Այն հասունութիւնը, ժողովրդի կեանքով և ժողովրդի համար ապրելու պատրաստակամութիւնը, որ տեսնում ենք Բարկէնի և Արշամի մէջ, չի երևում քսանական թուականներին գրուած այդ վէպում: Մինչդեռ աւելի ուշ, մօտ տասը տարի յետոյ, Շուշանեանին աւելի լրջօրէն մտահոգեց եղեռնից փրկուած սերնդի ճակատագիրը, նրանց հասարակական գիտակցութեան հասունացումը: Պօսելով որբերի հետագայ ճակատագրի մասին, Շուշանեանը փաստօրէն կեանքի և գործունէութեան ծրագիր էր առաջարկում տարագրութեան մէջ ապրող ամբողջ ժողովրդի համար: Բարկէնին ու Արշամին ուղղուած ընդհանուր հսկիչի խօսքերը հաւասարապէս վերաբերում են ամբողջ ժողովրդին. «Պէտք է որ ուժեղ մարդիկ ըլլաք, պէտք է որ սլաքի մը պէս ուղիղ յառաջանաք: Պէտք է որ մեր սերունդը, որ արիւն տեսաւ այս ազգին ճակատագիրը իր զօրեղ ձեռքերուն մէջ առնէ: Կարևորը միայն ապրելը չէ, այլ մ ե ծ ու թ ե ա մ բ ա պրելը»:

Ահա այս էր Շուշանեանի և իր մի շարք ժամանակակից գրողների պահանջը սեփա-

կան ժողովրդից. ոչ միայն գոյութիւն, կամ գոյատևում, այլև գիտակցուած, նպատակամղուած կեանք, մ ե ծ ու թ ե ա մ բ ա պրել: Շուշանեանի այս պահանջը զարմանալիօրէն նոյնանում է յատկապէս Շահնուրի հրատարակարկայական յօդուածներում արտայայտուած տրամագրութիւններին, որոնք իր ժամանակին եւ հետագայում ընդունուեցին սուրիներով («Ազատն Կոմիտաս», «Աւագ Ուրբաթ», «Վաւերագրութիւն» և այլն): Երկուսն էլ գնում են ժողովրդի լիարժէք կեանքի պահանջ. Շահնուրն այդ անում է իրեն յատուկ սրութեամբ և անողոք երկրնորանք հրամայականութեամբ, մինչդեռ Շուշանեանի մօտ այդ պահանջը կարծես սեփական կենսագրութեան վերլուծման, ինքնազննումի արդիւնքն է:

«Արդեօք ինչպիսի՞ մարդ մը պիտի ըլլամ», — այս միտքն է շարունակ տանջում Բարկէնին և ստիպում ամէն ինչ դիտել այս կարևոր խնդրի լոյսի տակ: «Դուք կը կարծէք, թէ մահ կայ: Ի՞նչ մահ: Մատիս վրայ վէրք մը ունիմ, բլիջներու խումբեր, որ վիրաւոր են, որ այլևս չեն կրնար կատարել իրենց դերը: Մարմինս խորունկէն նոր բլիջներ կը ստեղծէ: Դուք կորսուած բլիջներուն վրայ կը մտածէք, ես միայն նորբը կը տեսնեմ» (ընդգծումը մերն է — Ա. թ.), — ասում է վէպի միւս հերոսը՝ Արշամը: Գուցէ չափից աւելի լաւատես է նա, բայց այս անվերապահութեան հիմքում ընկած էր Շուշանեանի ճշմարիտ պատասխանը Բարկէնին տանջող հարցին, և միայն այդպիսի հաստատուն լաւատեսութեամբ նա կարող էր իր ժողովրդի հետ վերադառնալ դէպի իսկական ու լիարժէք կեանք:

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ